58	Ստեփաննոս եպիսկոպոս Շախալեան (խաժակն) Աղէքսանդրապոլցի [1]) ըստ գործոյն բացման սինոդի 1837. 22 յունվարի թերթն 121 և 122։	1836	—	Ցաւուրս սորա բացաւ թեմական Հոգևոր տեսանն (կոնսիստորիայն) ըստ զօրութեան կանոնադրութեան կառավարութեան Հայոց եկեղեցւոյ 'ի Ռուսաստան և առաջնորդք պարտաւորեցան բնակիլ 'ի քաղաքս։
59	Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանց	1838	—	յԱմին 1838 բացող թեմական տեսնին Շամախւոյ, տես 'ի գործն բացման տեսնին յամին 1838 փետր. 4. թերթն՝ յերես 338 և 476։ Այնուհետև առաջնորդք նստին 'ի Շամախի քաղաքի, իսկ 'ի վանս՝ վանահարք։
60	Մինաս եպիսկոպոս Օշականցի . . .	1840	—	Վանահայր Պետրոս վարդապետն։
61	Մովսէս վարդապետ Մաղաքեանց . . .	1845	—	Վան. Խաչատուր վարդապետ։
62	Գէորգ եպիսկոպոս Երևանցի ապա առաջնորդ Նոր-Նախիջևանայ	1858	—	Նոյն։
63	Դանիէլ Արք եպիսկոպոս Տարօնեցի, որոյ գերեզմանն առ դրան Սաղիանի վանից։ .	1864	—	Վան. Սարգիս վարդապետ։

[1]) Ստեփաննոս Արք եպիսկոպոս Խաժակնեան վախճանուած է յԱղէքսանդրապոլ քաղաքի, յամին 1842, և թաղուած է նոյն քաղաքի հասարակաց հին գերեզմատանն, քաղաքի արևմտեան կողմի երկայն հողաթումբի վերայ, Սարոյեանց քաւոր Դաւթի տան վերևն, որոյ տապանագիրն է այսպէս.

„Այս է տապան հանգստեան Ստեփաննոս Արք եպիսկոպոսի Խաժակնեան, 1842, մայիսի 5։“